

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակազմի՝ 2018 թվականի ընթացքում իրականացրած աշխատանքների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, ներկայացնում է 2018 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Համայնքն ունի 293.78 հեկտար հողատարածք, որից 214.06 հեկտարը գյուղատնտեսական նշանակության են:

Բնակչության թիվը համայնքում 1028 մարդ է, տնտեսությունների քանակը՝ 210:

2018 թվականի ընթացքում համայնքում ծնվել է 8 երեխա: Օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն է ուղարկվել համայնքի՝ 2019 թվականի բյուջեն, տեղական տուրքերի դրույքաչափերը՝ պետական իրավական փորձաքննության ենթարկելու համար:

Օրենքի բնագավառում ցանկացած նորամուծություն, որը վերաբերում է համայնքի բնակիչների առջև դրված հիմնախնդիրների լուծմանը, հողի հարկի, գույքահարկի և տեղական տուրքերի մուծմանը, ինչպես նաև այլ կարևոր հարցերի է առնչվում, բնակիչներին տեղեկացրել են Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակիցները:

Համայնքապետարանն օգտագործել է բոլոր հնարավորությունները՝ համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տալու, քանի որ վերջիններիս հետ մշտապես գտնվում է անմիջական շփման մեջ:

Համայնքապետարանի աշխատակազմը հնարավորությունների սահմաններում աջակցել է բնակչությանը այլ հիմնարկությունների հետ ունեցած խնդիրների համահարթեցման գործում՝ ցուցաբերելով խորհրդատվական օգնություն, ինչպես նաև ապահովել է նրանց փաստաթղթային շրջանառությունը՝ տեղեկանքների կամ այլ փաստաթղթերի տեսքով:

Անհրաժեշտության դեպքում համայնքապետարանը սոցիալապես անապահով պայմաններում ապրող որոշ ընտանիքների աջակցել է պետության կողմից տրվելիք նպաստները ստանալու գործում:

Համայնքապետարանը կազմակերպել և Ազգային վիճակագրական ծառայության Վաղարշապատի տարածքային բաժին է ներկայացրել համայնքապետարանի աշխատակազմի միջոցով իրականացված հաշվառումը՝ անասունների գլխաքանակի և ցանքատարածությունների

վերաբերյալ, յուրաքանչյուր ամսվա ստացած բերքի հաշվառման ցուցանիշները, աշնանացան և գարնանացան ցանքատարածությունների բերքատվության ամսական արդյունքները:

ԱՍ հասարակական և FCN բարեգործական կազմակերպությունները նույնքան և դեկտեմբեր ամիսներին իրենց ուշադրության կենտրոնում են պահել համայնքի բնակիչներին: Նրանց օժանդակությամբ համայնքի 0-18 ամսական 19 երեխայի հագուստի և կոշիկի տեսքով բաժանվել են նվերներ:

Հաշմանդամների միջազգային օրվա շրջանակներում նրանց օժանդակությամբ համայնքի տարբեր հաշմանդամության կարգ ունեցող 17 բնակչի տրվել է հագուստ և կոշիկ:

ԱՍ հասարակական կազմակերպությունը իր հերթական ծրագիրը համայնքում իրականացրել է դեկտեմբերի 13-ին : Բարեգործական օգնության թիրախային խումբը համայնքի 70 անապահով ընտանիքն էր: Օգնությունը հագուստի, կոշիկի և սննդի տեսքով էր:

Ներկայացվում են Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակազմի՝ 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքները ըստ բնագավառների:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

ԲՆԱԳԱՎԱՌ

2018 թվականի ընթացքում տարբեր կազմակերպություններից Շահումյանի թ/Ֆ համայնքապետարան է մուտքագրվել 383 գրություն, որոնք ժամանակին քննարկվել են, պատասխանվել է 152 գրության:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 15 որոշում, արձակվել է 33 կարգադրություն, կայացել է ավագանու 7 նիստ, արձակվել է ավագանու 33 որոշում, աշխատակազմի քարտուղարի 4 հրաման: Համայնքապետարանն ապահովել է համայնքի բնակիչների փաստաթղթային շրջանառությունը. տրվել է 206 տեղեկանք :

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակիցների կողմից 2018 թվականի ընթացքում օրենքով սահմանված կարգով կազմակերպվել են հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի հավաքագրման և վերահսկման աշխատանքներ :

Ներկայացվում է համայնքի՝ 2018 թվականի բյուջեի եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը և 2017 թվականի նկատմամբ համեմատական վերլուծությունը.

	2017 թ.			2018 թ.		
	Տարեկան	Փաստացի	%	Տարեկան	Փաստացի	%

Հողի հարկ	528	529.6	100.3	552	558.5	101.2
Գույքահարկ փոխադր. միջ.	1884	2709.9	143.8	1980	1646.3	83.1
Գույքահարկ շենք - շինութ.	40	41.2	103	40	34.3	85.8
Տեղական տուրք	15	19.6	130.7	12	11	91.7
Հողերի վարձավճար	55	55	100	55	55	100
Աղբահանության վճար	180	20	11.1	516	9	1.7
Այլ ոչ հարկային եկամուտ.	0	2100	0	0	100	0
Դոտացիա	24428.1	24428.1	100	24014.4	24014.4	100
ԸՆԴԱՄԵՆԸ	27130.1	29903.4	110.2	27169.4	26428.5	97.3

Շահումյանի թ/Ֆ համայնքի բյուջեի 2018 թվականի հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ տարեկան հաշվարկային և փաստացի կատարված թվերով և 2017 թվականի նկատմամբ համեմատական վերլուծությունը.

	2017 թ.			2018 թ.		
	Տարեկան	Փաստացի	%	Տարեկան	Փաստացի	%
Աշխատավարձ	19623.6	19114.3	97.4	16517	14049.5	85
Պարգևատրում	0	0	0	2000	1539.9	76.9
Էներգետիկ ծառայություն	850	850	100	600	269.6	44.9
Կոմունալ ծառայություն	60	0	0	100	0	0
Կապի ծառայություն	180	159	88.3	230	228.5	99.3
Ներքին գործուղումներ	80	0	0	80	14.8	18.5
Համակարգչ. ծառայություն	80	76	95	92	83	90.2
Աշխ. մասնագ. զարգացում	0	0	0	80	0	0
Տեղեկատվական ծառայություն	150	136	90.6	120	48	40
Ներկայացուցչական ծախսեր	440	180	40.9	240	239.8	99.9
Ընդհ. բնույթի այլ ծառայություն	1600	1352.8	84.5	2200	1489.1	67.6
Մասնագիտ. ծառայություն	0	0	0	150	80	53.3
Շենքերի և կառ. ընթ. նորոգում	440	50	11.3	600	50	8.3
Մեք. և սարք. ընթ. նորոգում	80	80	100	80	0	0

Գրասենյակային նյութեր	200	200	100	200	186.1	93
Կենցաղային նյութեր	120	120	100	120	5.9	4.9
Հատուկ նպատ. նյութեր	80	80	100	80	58.9	73.6
Այլ նպաստներ բյուջեից	2000	1775.4	88.7	1000	905	90.5
Նվիր. այլ շահույթ չհետ. կազմ.	12	12	100	12	12	100
Պարտադիր վճարներ	50	12.7	25.4	100	5	5
Վարչական սարքավորումներ	300	0	0	300	0	0
Ոչ նյութական հիմն. միջոցներ	0	0	0	350	0	0
Հողի օտարման մուտքեր	0	-2403.6	0	0	0	0
Պահուստային ֆոնդ	7107.2	0	0	16350	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	33452.8	24198.2	72.3	41601	19265.1	46.3

Շահումյանի թ/ֆ համայնքի բյուջեի ծախսերի ` 2018 թվականի հաշվետվությունը ըստ գործառական դասակարգման ` տարեկան հաշվարկային և փաստացի կատարված թվերով և 2017 թվականի նկատմամբ համեմատական վերլուծությունը.

	2017 թ.			2018 թ.		
	Տարեկան	Փաստացի	%	Տարեկան	Փաստացի	%
Ընդհ. բնույթի հանր. ծառ.	21901.6	20021.8	91.4	21734	16553.7	76.1
Գյուղատնտեսություն	364	363.8	99.9	437	436.5	99.8
Տնտես. հարաբերություն.	0	-2403.6	0	0	0	0
Աղբահանում	1080	1080	100	1080	1080	100
Այլ մշակույթ. կազմակերպ.	1000	957.2	95.7	1000	289.9	28.9
Սոց. հատուկ արտոնույթ.	2000	1775.4	88.7	1000	905	90.5
Պահուստային ֆոնդ	7107.2	0	0	16350	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	33452.8	21794.6	65.1	41601	19265.1	46.3

Շահումյանի թ/ֆ համայնքապետարանը 2018 թվականի ընթացքում համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով կազմակերպել է որոշակի աշխատանքներ :

Հնարավորության սահմաններում համայնքի բյուջեի հաշվին իրականացվել են սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու աշխատանքներ:

2018 թվականի ընթացքում Շահումյանի թ/ֆ համայնքի 24 անապահով բնակչի տրվել է 805.0 հազար դրամի դրամական օգնություն: Դրամական օգնություն հատկացնելիս հաշվի է առնվել

համայնքի բնակիչների սոցիալական վիճակը, որն ուսումնասիրվել և համապատասխան եզրակացությամբ գեկուցվել է համայնքի ղեկավարին՝ սոցիալական հանձնաժողովի կողմից:

Համայնքապետարանը փետրվարին կազմակերպել է Տեառնընդառաջի միջոցառում: Համայնքի 2 նորապսակ զույգի նվերներ տրամադրելու համար կատարվել է 60.0 հազար դրամի ծախս:

Ապրիլ ամսին Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ համայնքի 63 տարին լրացած 55 կանանց նվերների համար ծախսվել է 230.0 հազար դրամ:

Համայնքից 1-ին դասարան հաճախող 5 երեխայի նվերներ տրամադրելու նպատակով համայնքի բյուջեից հատկացվել է 50.0 հազար դրամ:

Դեկտեմբերի վերջին Ամանորի տոնի առթիվ կազմակերպվել է միջոցառում: Համայնքի 0-12 տարեկան 168 երեխայի բաժանվել են նվերներ խաղալիքների տեսքով՝ յուրաքանչյուր տարիքային խմբին համապատասխան: Ծախսվել է 190.0 հազար դրամ:

Դիտահորերի և կոյուղիների խցանված խողովակաշարերի մաքրման համար ծախսվել է 78.0 հազար դրամ:

ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2018 թվականի ընթացքում համայնքում պարբերաբար իրականացվել են աղբահանության աշխատանքներ:

Ապրիլ, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին բնակիչների հետ կազմակերպվել է շաբաթօրյակ:

2018 թվականի ընթացքում տեխնիկայի միջոցով հարթեցվել են Ավան թաղամասի փողոցները , դեպի գերեզմանատուն տանող ճանապարհը և 1-ին, 3-րդ, 4-րդ փողոցները, ապա խճապատվել են աղացած ասֆալտով:

Համապատասխան տեխնիկայի միջոցով մաքրման աշխատանքներ են տարվել 1-ին փողոցի 32 և 44 շենքերի, 4-րդ փողոցի 2, 4, 6, 8 շենքերի բակերում. մաքրվել են կոյուղու խցանված խողովակաշարերը, դիտահորերում կուտակված աղբը:

Ողջ տարվա ընթացքում համակարգված կազմակերպվել է համայնքի փողոցների լուսավորության գործընթացը:

Նոյեմբերի վերջին Շահումյանի թ/Ֆ համայնքապետարանի շենքի դիմացի անմշակ տարածքը մաքրվել է մոլախոտերից, փորվել են ակոսներ: Մաքրված տարածքում համայնքի բնակիչների և համայնքապետարանի աշխատակազմի ակտիվ մասնակցությամբ տնկվել են 50 պտղատու և 30 տուա տեսակի մշտադալար դեկորատիվ ծառեր՝ տրամադրված էյ Թի Փի հիմնադրամի կողմից:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2018 թվականի ընթացքում աջակցություն է ցուցաբերվել Արմավիրի մարզային զինվորական կոմիսարիատի գործունեությանը՝ հնարավորության սահմաններում տրամադրելով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը՝ համայնքում գորակոչի ենթակա անձանց վերաբերյալ:

Պարբերաբար կատարվել են Արմավիրի զինկոմիսարիատի կողմից տրված տարատեսակ հանձնարարականները:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

<< 31 >> հունվարի 2019 թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի համար առաջնահերթ լուծում պահանջող խնդիր է գազաֆիկացումը: Համայնքի մոտ 73 տնտեսություն գազաֆիկացվել է Շահումյան գյուղի բաժանարար կետից, իսկ գյուղի մեծամասնությունը գազաֆիկացված չէ: Համայնքի գազաֆիկացման համար առաջին հերթին անհրաժեշտ է գազի նոր բաժանարար կետ, որը կապահովի համայնքի մնացած բնակիչների տների գազաֆիկացումը: Սա շատ տարողունակ և գումար պահանջող խնդիր է, որի լուծման համար հայցում ենք մարզպետարանի աջակցությունը:

2. Կոյուղագծերի վերանորոգումը:

3. Կենտրոնական ճանապարհի ասֆալտապատումը:

4. Մանկապարտեզի բացակայությունը:

5. Բնակչության մեծամասնությունը չունի մշտական աշխատանք և եկամուտի աղբյուրներ, հողերը հիմնականում 5-րդ կարգի են և անեկամտաբեր:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

<< 31 >> հունվարի 2019 թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

